ՆՈՐ-ԴԱՐ

№ 155 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 9 Հոկտեմբերի 1892 Ուրբաթ, 9 Հոկտեմբերի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 155

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կոպէկ։ Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների գնահն 2 կ., թերկամների համար կրկնապատիկ։

Հոկտեմբերի 1-ից մինչև տարեւս վերջը «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում և վճարում են 3 ր. 50 կ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրօնիկոն.—Կովկասի կառավարչապետի վերադարձը։ Բնջայի հայոց Նոր Թատրոնի հրդեհը։ Գրագէտների ընկերութեան մասին։ Զինագոյի համաշխարհային ցուցահանդէսին մասնակցելուն վերաբերեալ։ այդ պետութեան համեմատ, ընկերութեան մասնակցութեան բոլոր ծախքերը հաշուած՝ նոսում է մօտ 1500 ր., որի ²/₃ մասն անհրաժեշտ համարուեց անմիջապէս յատկացնելու։ Յիշեալ գումարից 150—200 ր. պիտի է նշանակուած Կովկասի երկրագործական և գիւղատնտեսական դպրոցների մասին գրած համառօտ ամենաբաւ աշխատութեան համար, որը ներկայացնելու ժամանակամիջոցը նշանակուած է մինչև 1893 թուի յունուարի 15-ը։

—

Թիֆլիսի Դեսիմոճավկայա հրապարակում քաղաքիս հոգևոր սեմինարիան կլօճուղայ հայր Խիզդրն ամբողջ ամառուայ ընթացքում մալականների մէջ քարոզներ էր խօսում սուրբ պատկերների մասին և այդ քարոզները շաբաթական համեմատ ամեն կիրակի։ Այս օրերս էլ հայր Խիզդրը, «Кав.»-ի ասելով, քարոզ է խօսել մկրտութեան մասին։

—

Թիֆլիսի քաղաքային խորհուրդի կողմից նշանակած մի գործակալ շրջում է քաղաքիս ձիաքարշի վրայ կատարուող անկարգութիւնները դիտելու։ Եթէ տեսնում է, որ կառապանը անօրինեալ հագուստը հագած չէ կամ կոնդուկտորի գործը պատուոյ չէ կամ վրան թիւ չէ նշանակուած, այդպիսի և նման օրինակ զեղծումների մասին տեղեկութիւն է տալիս քաղաքային վարչութեան, որպէսզի սա ձիաքարշի ընկերութեան վրայ պատմանագրի համաձայն տուգանք նշանակէ։

Ինչպէս լսանում ենք, հնգգական և տասնեակի բուբլիներից կազմուող տուգանքը մի կարճ ժամանակամիջոցում հասնում է 100—150 բուբլու։

Ձիաքարշի ընկերութիւնն ամենայն ճշտութեամբ քաղաքային վարչութեան կողմից պահանջած տուգանքը հատուցանում է անթարատնջ։

Հասկանալի է թէ ինչու ձիաքարշի ընկերութիւնը յօժարութեամբ հատուցանում է այդ տեսակ տուգանքները. ընկերութիւնն այդ տուգանքները հանում է ընկերութեանը ծառայողների ռոճկից։

Այդ ճանապարհով երևի քաղաքը կրծածկէ իւր մեծամեծ ծախքերը և պարտքերը։

ՌՈՒՍԻԱՅԻ ԹԵՐԹԵՐՈՒՄ ԿԱՐԴՈՒՄ ԵՆՔ

Սոյն հոկտեմբերի սկզբից մի խմբագրական յանձնաժողով սկսում է իւր աշխատանքները քրէական նոր օրէնսդրութիւն մշակելու համար։

—Լսւում է, որ օրէնսդրական ջոջանները մօտիկ ապագայում մի ծրագիր կը քննուի անմիջական հարկերի նոր կանոնադրութեան մասին։

—Պետական խորհրդում չուտով քննուելու է կրթական ցենզով արուող արտօնութիւնների և առաւելութիւնների կանոնադրութեան մէջ փոփոխութիւնները մտցնելու ծրագիրը։

—Ֆինանսների մինիստերութիւնը ծրագիր է կազմում գիւղական հարկերի վճարումը 12 ամսի վրայ բաժանել և առանձին մասնաժողովները է հիմնում հողերի եկամտաւէտի քանակութիւնը որոշելու համար։

—1891 թուին Ռուսիայից Ամերիկա գաղթողների թիւը 120,000 է։ Ռուսաստում 100 միլիոն ժողովուրդ հաշուելով, այդ թիւը քիչ է համարուում։

—Ասորեստանում և Սարատովում խոլերայի ժամանակ անկարգութիւնները անելուն համար մեղադրուողների գործը կը քննուի պինդ օրինաւորական դատարանով երեք տեղում. Սարատովում կը քննուին 280 հոգով բաները, Յարեսւում 25 հոգի, իսկ Ասորեստանինը դեռ չէ հրատարակուած։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐՈՒՄ ԿԱՐԴՈՒՄ ԵՆՔ.

—Տ. Խորէն եպիսկոպոս Նոր-Պէյթառն ժողովոյ ներկայանալով իւր նիւթական անձկութիւնն յայտնեց և Պատրիարքարանի մէջնորդութիւնը խնդրեց իւր վիճակի բարւոքման համար։ Փողովը նկատելով որ Ն. Սրբազնութեան արդի կացութեան մէջ ոչ միջնորդութիւնը կրնայ տեղի ունենալ և ոչ ալ եկեղեցի կամ պատուոյ մը յանձնուիլ երևի, այլ միայն, եթէ կը հաւանի ինք՝ իւր բնակութեան և ապրուստին համար վանք մը յատկացուիլ, այս կերպիւ պատասխան տուաւ յղեալ եպիսկոպոսին։

—Քիւրդերէն այժմ ալ հնձելագործք կրկնգծուին։ Ազդէն այդ քիւրդ հնձելագնդերէն 40ը կազմուած են և խօսք կայ 60հիսացուելու ադոնց թիւը և Պարսից տիկիններէն այժմ զբաղուած են ադոնց մեսագսաթել գործնէրը հիւսելու, Դուրանէն ալ հատուածները պատկերելով անոնց վրայ։ Յանձ. նաժողովը որի մասին կը խօսուի, Արտաքին գործերի նախարարութեան պաշտօնեայներէ և այլ և այլ կարգի պինդուրականներէ կազմուած է, թէև ամենքն ալ շատ պարկեշտ մարդիկ, սակայն ինչ կարելի է յուսալ իրենց անձնուած այս պաշտօնէ։

—«Սէմամոլ» կըսէ թէ Բարիզու «Նաբէյ Էքսբեսսուար»ը հայկական մատուռ ընելու համար ֆրանսական կառավարութեան խնդիրք մատուցանողներն հռոմէական հայերն են։ Հետևաբար եթէ այդ մատուռ նուիրուի ֆրանսական կառավարութեան կողմէ, հռոմէական հայոց ազօթատեղի պիտի ըլլայ։

—Կ. Պոլսոյ ուսումնական խորհուրդն իւր նախընթաց օրուայ նստին մէջ վաւերացուց Վահան էֆ. Քիւրքճեանի կողմէ պատրաստուած Համաշխ Ընդհանուր Պատմութիւն անուն դասագիրքն ապգ. վարժարանաց մէջ։ Նոյնպէս վաւերացուց Կնդվք էֆ. Թէյեանի պատրաստած Նոր Ընթերց Իրաֆիոս-Բէյան դասագրքին Ա. տարին որ ասկից առաջ մատուցուած էր արդէն խորհրդոյ քննութեան։

—Ապգ. վարժարանաց մէջ գործածուելիքն արտօնուած դասագրոց մէկ ցուցակը պատրաստուած է Ուսումնական խորհրդոյ կողմէ և պիտի մատուցուի կրթական նախարարութեան։ Ուսումնական խորհուրդը նոյնպէս պատրաստած է մայրաքաղաքիս բոլոր ազգային վարժարանաց մանրամասն մէկ վիճակագիրը և յանձնած է գայն Ապգ. Վարչութեան որ պիտի մատուցանէ Կրթական նախարարութեան։

—Պուլկարիոյ և Արևելեան Բումելիի հայ գաղթականները մէջէն հայերէն լեզուի դասատուներ չգտնելու համար Պուլկար կառավարութեան առած որոշման մասին հորագոյն տեղեկութիւնք կը հաղորդուին Վառնայէ։

Պուլկարիոյ կրթական նախարարը պաշտօնագիր մը ուղղելով Վառնայի կրթական ատեանին, հրամայած է տեսնել անօրինութիւնները գործադրել հայոց թէ արական և թէ իգական դպրոցներուն մէջ։ Հայոց դպրոցը պիտի վերածուի պարզ նախակրթարանի մը ուր պիտի ընդունուին 6-էն 12 տարեկան տղայքը միայն։ Նախակրթարանց շրջանը պիտի տևէ վեց տարի։ Առաջին երեք տարիները բրնաւ հայերէն լեզու պիտի չսւանդուի դպրոցին մէջ։ Իսկ վերջին երեք տարիներուն համար մասնաւոր ուսուցութիւն պիտի խնդրուի կրթական նախարարէն, և եթէ ուզուի այդ ուսուցութիւն, այն ատեն միայն բարձրագոյն երեք դասերուն հայերէն պիտի ուսանդուի։ Աւանդուելիքները պիտի ըլլան միմիայն հայերէն լեզուի նախնական գիտելիք։ Բոլոր ուսումները պուլկար լեզուաւ պիտի ուսանդուին Հայոց Նախակրթարաններուն մէջ։

—Երեկուան (սեպ. 27) սուրհանդակաւ առնուած Սէյտլօ կէս-պաշտօնական պուլկար լրագիրը մը ուղղելով Վառնայի կրթական ատեանին, հրամայած է հետևեալ անօրինութիւնները գործադրել հայոց թէ արական և թէ իգական դպրոցներուն մէջ։ Հայոց դպրոցը պիտի վերածուի պարզ նախակրթարանի մը ուր պիտի ընդունուին 6-էն 12 տարեկան տղայքը միայն։ Նախակրթարանց շրջանը պիտի տևէ վեց տարի։ Առաջին երեք տարիները բրնաւ հայերէն լեզու պիտի չսւանդուի դպրոցին մէջ։ Իսկ վերջին երեք տարիներուն համար մասնաւոր ուսուցութիւն պիտի խնդրուի կրթական նախարարէն, և եթէ ուզուի այդ ուսուցութիւն, այն ատեն միայն բարձրագոյն երեք դասերուն հայերէն լեզուի նախնական գիտելիք։ Բոլոր ուսումները պուլկար լեզուաւ պիտի ուսանդուին Հայոց Նախակրթարաններուն մէջ։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐՈՒՄ ԿԱՐԴՈՒՄ ԵՆՔ.

—Տ. Խորէն եպիսկոպոս Նոր-Պէյթառն ժողովոյ ներկայանալով իւր նիւթական անձկութիւնն յայտնեց և Պատրիարքարանի մէջնորդութիւնը խնդրեց իւր վիճակի բարւոքման համար։ Փողովը նկատելով որ Ն. Սրբազնութեան արդի կացութեան մէջ ոչ միջնորդութիւնը կրնայ տեղի ունենալ և ոչ ալ եկեղեցի կամ պատուոյ մը յանձնուիլ երևի, այլ միայն, եթէ կը հաւանի ինք՝ իւր բնակութեան և ապրուստին համար վանք մը յատկացուիլ, այս կերպիւ պատասխան տուաւ յղեալ եպիսկոպոսին։

—Քիւրդերէն այժմ ալ հնձելագործք կրկնգծուին։ Ազդէն այդ քիւրդ հնձելագնդերէն 40ը կազմուած են և խօսք կայ 60հիսացուելու ադոնց թիւը և Պարսից տիկիններէն այժմ զբաղուած են ադոնց մեսագսաթել գործնէրը հիւսելու, Դուրանէն ալ հատուածները պատկերելով անոնց վրայ։ Յանձ. նաժողովը որի մասին կը խօսուի, Արտաքին գործերի նախարարութեան պաշտօնեայներէ և այլ և այլ կարգի պինդուրականներէ կազմուած է, թէև ամենքն ալ շատ պարկեշտ մարդիկ, սակայն ինչ կարելի է յուսալ իրենց անձնուած այս պաշտօնէ։

—«Սէմամոլ» կըսէ թէ Բարիզու «Նաբէյ Էքսբեսսուար»ը հայկական մատուռ ընելու համար ֆրանսական կառավարութեան խնդիրք մատուցանողներն հռոմէական հայերն են։ Հետևաբար եթէ այդ մատուռ նուիրուի ֆրանսական կառավարութեան կողմէ, հռոմէական հայոց ազօթատեղի պիտի ըլլայ։

—Կ. Պոլսոյ ուսումնական խորհուրդն իւր նախընթաց օրուայ նստին մէջ վաւերացուց Վահան էֆ. Քիւրքճեանի կողմէ պատրաստուած Համաշխ Ընդհանուր Պատմութիւն անուն դասագիրքն ապգ. վարժարանաց մէջ։ Նոյնպէս վաւերացուց Կնդվք էֆ. Թէյեանի պատրաստած Նոր Ընթերց Իրաֆիոս-Բէյան դասագրքին Ա. տարին որ ասկից առաջ մատուցուած էր արդէն խորհրդոյ քննութեան։

—Ապգ. վարժարանաց մէջ գործածուելիքն արտօնուած դասագրոց մէկ ցուցակը պատրաստուած է Ուսումնական խորհրդոյ կողմէ և պիտի մատուցուի կրթական նախարարութեան։ Ուսումնական խորհուրդը նոյնպէս պատրաստած է մայրաքաղաքիս բոլոր ազգային վարժարանաց մանրամասն մէկ վիճակագիրը և յանձնած է գայն Ապգ. Վարչութեան որ պիտի մատուցանէ Կրթական նախարարութեան։

—Պուլկարիոյ և Արևելեան Բումելիի հայ գաղթականները մէջէն հայերէն լեզուի դասատուներ չգտնելու համար Պուլկար կառավարութեան առած որոշման մասին հորագոյն տեղեկութիւնք կը հաղորդուին Վառնայէ։

Պուլկարիոյ կրթական նախարարը պաշտօնագիր մը ուղղելով Վառնայի կրթական ատեանին, հրամայած է հետևեալ անօրինութիւնները գործադրել հայոց թէ արական և թէ իգական դպրոցներուն մէջ։ Հայոց դպրոցը պիտի վերածուի պարզ նախակրթարանի մը ուր պիտի ընդունուին 6-էն 12 տարեկան տղայքը միայն։ Նախակրթարանց շրջանը պիտի տևէ վեց տարի։ Առաջին երեք տարիները բրնաւ հայերէն լեզու պիտի չսւանդուի դպրոցին մէջ։ Իսկ վերջին երեք տարիներուն համար մասնաւոր ուսուցութիւն պիտի խնդրուի կրթական նախարարէն, և եթէ ուզուի այդ ուսուցութիւն, այն ատեն միայն բարձրագոյն երեք դասերուն հայերէն լեզուի նախնական գիտելիք։ Բոլոր ուսումները պուլկար լեզուաւ պիտի ուսանդուին Հայոց Նախակրթարաններուն մէջ։

—Երեկուան (սեպ. 27) սուրհանդակաւ առնուած Սէյտլօ կէս-պաշտօնական պուլկար լրագիրը մը ուղղելով Վառնայի կրթական ատեանին, հրամայած է հետևեալ անօրինութիւնները գործադրել հայոց թէ արական և թէ իգական դպրոցներուն մէջ։ Հայոց դպրոցը պիտի վերածուի պարզ նախակրթարանի մը ուր պիտի ընդունուին 6-էն 12 տարեկան տղայքը միայն։ Նախակրթարանց շրջանը պիտի տևէ վեց տարի։ Առաջին երեք տարիները բրնաւ հայերէն լեզու պիտի չսւանդուի դպրոցին մէջ։ Իսկ վերջին երեք տարիներուն համար մասնաւոր ուսուցութիւն պիտի խնդրուի կրթական նախարարէն, և եթէ ուզուի այդ ուսուցութիւն, այն ատեն միայն բարձրագոյն երեք դասերուն հայերէն լեզուի նախնական գիտելիք։ Բոլոր ուսումները պուլկար լեզուաւ պիտի ուսանդուին Հայոց Նախակրթարաններուն մէջ։

ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԹԻԻ

Գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան ծրագիրը, որը արդէն տպուած է և պիտի ցրուէր հասարակութեան մէջ, դժբաղդաբար չէ հասել իւր նպատակին. Թիֆլիսի մէջ միմիայն Վլադըսլավյա փողոցի մի քանի խանութներն են արժանացել յիշեալ ծրագիրը ստանալու պատուին, այն ինչ Մերձին փողոցում, Բազալեանցում, Մէյդանում, երկաթգաւառների շաբքում և միւս առևտրական կեդրոններում ծառայող գործակատարներն ամենևին տեղեկութիւն անգամ չունեն ծրագրի գոյութեան մասին։

Յարգելի մասնաժողովը «Кавказъ» լրագրում յայտնել էր, որ «տպուած է 500 օրինակ և սկսել են ցրել հասարակութեան մէջ», արդեօք չի կարելի իմանալ թէ դրանք է ցրած. 25 օրինակ ուղարկելով «Նոր-Դար»-ի խմբագրութեանը չի նշանակում թէ արդէն ցրել է։ Չի՞ որ խմբագրութիւնը պատասխան չէ մարդ վարձել անէ տուն, խանութից խանութ մանածելով գործակատարների ընկերութեան ծրագիրը ցրել։ Չի՞ որ այդ ծրագիրը կապ մելու տպագրելու և ցրելու համար ընտրուած է մի մասնաժողով և նրա վրայ են դրուած այդ պատասխանութիւնները։

Ինչու այդ ծրագրից մինչև օրս չէ ստացուել Առևտրական բանկում, Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութեան մէջ. ինչու չուզարկել մի քանի օրինակ Զիմախանեանի, Ագելեանեանի և Թայրեանի գործատանները, եղբայրք Ծովհաննէսեանների, Փիլոյեանների, Քսիպոնեանի և այլ յայտնի առևտրական գրասենեակները, որտեղ ծառայում են բազմաթիւ գործակատարներ. վերջապէս ինչ նպատակ կայ տպագրել տալ 500 օրինակ և ցրել 100—200-ը։

Չենք կարող մատնացոյց չանել և այն անյարմարութեան վրայ, որը առաջացել է գործին անհուսութեամբ վերաբերուելուց. այդ այն է, որ ծրագիրն ինչպէս, «Նոր-Դար»-ը նկատել էր, պէտք էր տպագրել նաև հայերէն և վրացերէն լեզուներով։

«Кавказъ» լրագրում յայտնուած էր, որ ցրելուց երկու շաբաթ յետոյ կը գումարուի ընդհանուր ժողով. շատ աւ. բայց չի՞ որ գործակատարների մեծամասնութեանը յայտնի չէ ծրագրի բովանդակութիւնը և ընդհանուր ժողովի բուն նպատակը։

Ցաւով ենք, որ յարգելի մասնաժողովը, ի նկատի ունենալով խնդրի կարևորութիւնը, գործին կանոնաւոր ընթացք տալու համար կարծատև ցրել յիշեալ ծրագիրը գործակատարների և հասարակութեան բոլոր խաւերի մէջ և այդ անելուց յետոյ անմիջապէս հրաւիրէ ընդհանուր ժողով, որով բարեխղճաբար կատարած կըլինի իրեն յանձնն առած հասարակական օգտակար գործը և կարժանանայ գործակատարների շնորհակալութեանը։

Տ. Խոջա-Փուման.

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՁԱՐԱՆ

Լատինական mens sana in corpore sano, այսինքն՝ առողջ հոգին առողջ մարմնի մէջ առածը քանի գնում գերակշռող դիր է խաղում լուսաւորուած ազգերի մէջ։ Այժմ ամեն կերպ աշխատում են մարզկային կեանքի ֆիզիքական պայմանները հնարաւոր կատարելութեան հասցնել, նրա կապմուածքն առողջ գրութեան մէջ պահել։ Մարմնի առողջութեան և կանոնաւոր զարգացման հոգը սկսւում է հենց երեխի ծննդեան օրից և ուղեկցում մինչև մահուան րոպէն։

Բժշկական աշխարհի լուսատուները բոլորովին համամիտ են այդ խնդրի վերաբերմամբ։ Հռչակաւոր ամերիկացի անգամահատ S. Weir Mitchll-ը իւր նշանաւոր ճառերից մինի մէջ ասում է։ «Այս կեանքում ամենաարժէքաւոր օգտակարութիւնն առողջութեան աստուձանի վրայ հնարաւոր է միայն»։ դարձեալ։ «Համոզուած եմ, որ ժողովրդի առողջութեան ստորին աստիճանը ապացոյց է նրա էական ստոր աստիճանին», և թէ «արեան նուա-

գուրխիւնը, ինչպէս և քսակի գաստարկուրխիւնը մի տեսակ փորձուրխիւն են ձեռնհասում...»։

Արդէն ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մարմնի առողջուրխեան վրայ շատ մեծ ուշադրուրխիւն դարձնողները չէին կարող անուշադիր լինել առողջարար ձաշ պատրաստելու խընդիրը, որ մարմնակազմի կանոնաւոր զարգացման ամենագլխաւոր պայմաններից մէկն է կազմում։

Եւ յիրաւի, լուսաւորուած երկրներում շատ վաղուց են ուշադրուրխիւն դարձրել կանոնաւոր և մարդկս կազմուածքին համապատասխան ձաշ պատրաստելու խնդրի վրայ։ Եւրոպական շատ երկրներում կան յատուկ ուսումնարաններ, ուր սովորեցնում են ձաշ պատրաստել՝ տեղական ժողովրդի պիտոյքներին համապատասխան, իսկ շատ տեղեր էլ փոխանակ ուսումնարանների՝ ուղղակի ձաշարանները են հաստատուած ամենաբնդարձակ հիմունքների վրայ, որոնց նպատակն է մի կողմից հասարակուրխեան չքաւոր մասին էժի կամ էժան գնով ձաշ մատակարարել, միւս կողմից ժողովրդին ընտելացնել կանոնաւոր հաշարարական արհեստին։

Այդ կողմից յայտնի են սիեզերական հռչակ վայելող գերմանական «Volksküche»-ն և փրանսիական «Fourneau Economigue»-ը, որոնք մեծ քանակուրխեամբ ձաշ պատրաստելով՝ տարածում են ժողովրդի չքաւոր դասակարգի մէջ։

Բայց հաշարարական արհեստով զբաղում են ինչպես բազմաթիւ գիտնականներ, որոնք իրենց բոլոր կեանքն ու հարստուրխիւնը գործ են դնում զանազան ուտելեղէնների բազադրուրխիւնն ուսումնասիրելով՝ թէ հում և թէ եփած գրուրխեամբ, նոյնպէս և ամբողջ ընկերուրխիւնները, որոնց նպատակն է հաշարարուրխեան վերաբերեալ ամեն տեսակ գիտելիքներ տարածել ժողովրդի հասարակ խաւերում։ Այդ ընկերուրխիւնները մինչև անգամ պահանջում են, որ հաշարարական արհեստը մտցնուի բոլոր հասարակական դպրոցներում՝ Թուաբանուրխեան և միւս առարկաներին համահաւասար՝ Պրոֆեսոր Էգլէստոնի կարծիքով օրինակ, 12 տարեկան աղջիկը կարող է առանց իւր առողջուրխեան վնասելու թէ ուտելեղէն գնել և թէ ձաշ պատրաստել։

Որ այդ հնարաւոր է, դրա ապացոյցը Բոստոնի (Ամերիկա) հասարակական ուսումնարաններն են, որոնց աշակերտուհիներն իրենց տանը առողջ, սննդարար և համեղ ձաշ են պատրաստում հենց միմիայն վառելիքի 25% խնայելով։

Ժողովրդի մէջ հաշարարուրխեան կանոնաւոր գիտելիքները տարածելու նպատակ ունի և Բոստոնում 1890 թուին հաստատուած «New England Kitchen» հաստատուրխիւնը, որի մասին հետաքրքիր տեղեկուրխիւններ է հաղորդում Մակ-Կախանը։

Ամերիկան գործնական մարդկանց ժողովածու լինելով, անկարելի էր, որ ինքն էս չգրաղուէր կանոնաւոր սննդառուրխեան խնդրով, մանաւանդ որ հաստատուած փաստ է, որ Ամերիկայի օդը չափազանց զրգռող ազդեցուրխիւն ունենալով բնակիչների նեարդային զրուրխեան վրայ, այնտեղ մարդկի երկու անգամ աւելի գործ են կատարում քան Եւրոպայում։ Հասկանալի է, որ աշխատանքի համեմատ էլ ոյժ գործադրուելով, մինչդոյն չափով էլ ուտելեղէն է գործածուելու։ Այդ է ահա պատճառը, որ ամերիկացիք, առանց բացառուրխեան, օրական երեք անգամ են ձաշ ուտում և այն էլ ամեն անգամ մի քանի տեսակ կերակուր։

Այսպիսով թէև ամերիկացիք բազմազան խորտիկները գործածելով աշխատում են գոհացնել իրենց մարմնի պահանջները, բայց և այնպէս ժողովրդի սննդառուրխեան խնդիրը նաւագնակարգ տեղ է բռնել։

Եւ այդ շատ պարզ է թէ ինչու, թէև ամերիկացու ձաշն իւր մէջ պարունակում է այնպիսի նիւթեր, որոնք աւելորդ են կամ մեծ չափով են և չունի կամ պակաս են այնպիսի նիւթեր, որոնք անհրաժեշտ են օրոշ չափով, իսկ կանոնաւոր ձաշը բոլորովին կախուած է պատրաստելու եղանակից, այսինքն զանազան չափով վեր առած զանազան հում նիւթերի խառնուրդը ջերմուրխեան օրոշ աստիճանին ենթարկելուց։

Եւ ահա հենց «New England Kitchen»-ն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մանաւանդ մարդկանց օժանդակուրխեամբ հաստատուած մի ընդարձակ խոհանոց, որի նպատակն է հասարակ ժողովրդին ձաշ պատրաստել սովորեցնել, այսինքն այնպիսի ձաշ, որ իւր մէջ պարունակէ մէմիայն սննդարար նիւթեր և ոչ մի անօգուտ նիւթ, որ ի զուր ծանրաբեռնելիս լինի ստամոքսը, և միևնոյն ժամանակ էլ ձաշն այնպիսի փոփոխուրխիւն կրի, ոչ միայն ամենահեշտ կերպով ենթարկուի ստամոքսային նիւթերի ազդեցուրխեան, այլ և համեղ լինի ու ձաշակով պատրաստած։

Իսկ որպէս զի մի այդպիսի հետեւանքի հասնեն, ամենից առաջ հարկաւոր էր մանրամասնաբար ուսումնասիրել, թէ ինչ քիմիական փոփոխուրխիւն են կրում ուտելեղէնները տարբեր ազդեցուրխիւնից։

Ահա այդ խնդրի լուծման համար աշխատեցին ինչպէս «New England Kitshen»-ի հիմնադիրները, նոյնպէս և մասնաւոր գիտնականները։

Այսպէս օրինակ այդ խոհանոցի հիմնադիրներից մէկը միսոս Էբէլը հինգ դասկզբից սկսեց իւր ուսումնասիրուրխիւնները Բոստոնի տեխնոլոգիական ինստիտուտի օդչակիցիք քիմիայի պրոֆեսոր m-rs Ellen H. Richards-ի առաջնորդուրխեամբ։ Միևնոյն կերպով այդ ուսումնասիրուրխիւններն անում էին Բոստոնի պրոֆեսոր Villian O. Atvater-ը Edvard Atkinson և Thomas Eqleston պրոֆեսորները և շատ ուրիշները։

Եւ այդ բոլոր ուսումնասիրուրխիւնների հետեւանքն այն եղաւ, որ Բոստոնի խոհանոցում պատրաստելով հասարակ և միջին դասակարգի գործածած ու սիրած կերակուրները, կարողացան ձշտիւ որոշել, թէ ինչ եղանակով պէտք է այդ կերակուրներն առնի սննդարար, առողջ և էժան դարձնել։ Այժմ արդէն այդ գործն այնքան մանրամասն կերպով ուսումնասիրուած է, որ նոր հաստատուած խոհանոցում կերակուրը պատրաստուում է ուղիղ նոյնպիսի անփոփոխ ձշտուրխեամբ, որպէս թէ դեպատմս լինէր։ Այժմ արդէն ամենամի առողջացող հիւանդ գիտէ, որ եթէ այդ խոհանոցից ապուր պահանջելու լինի բժշկի կարգադրուրխեան համաձայն, անկասկած այդ ապուրը պարունակելու 4—5% պինդ մարմին, որից 1%-ը աղ է, ֆոսֆորա-թթու աղ 0,1—0,2%, իսկ աղերի ընդհանուր գումարը մօտաւորապէս 0,4%։

Եւ հասարակ շատ դժուար է ժողովրդի ճաշակի ու հակումների դէմ կռուել. բայց աննկուն կամքն ու գործելու եռանդուն ոյժը կարող են ամեն մի յամառուրխեան յաղթել, վաղ թէ ուշ օգտակար գործն աջողեցնել։

Nev England Kitchen-ը հաստատուած լինելով ժողովրդի առաւել օգտակարգի համար և քաղաքի ազքատ մասում, սկիզբներում դժուարուրխիւնների հանդիպեցաւ։ Բայց գործի օգտակարուրխիւնը, երկու տարուայ բուռն մաքառումից յետոյ, ակնյայտնի գառնալով խեղճ ժողովրդի համար, ընդարձակ ծաւալ ստացաւ։

Ազքատ դասակարգը վարժուելով էժան, համեղ և առողջ կերակրի, սկսաւ իւր աղջկերանց ուղարկել խոհարարական արհեստն աւանդող ուսումնարաններ, որոնք Ամերիկայում կից են շատ տեղ քաղաքային կամ եկեղեցական ուսումնարաններին։

Ինչ ասել կուզէ, ժամանակի ընթացքում, երբ խոհարարական ուսումնարաններից աւարտած գուրս կը գան աշակերտուհիները, համեղ, առողջարար և էժան ձաշ ուտենալու պահանջն աւելի մեծ կը լինի, որովհետև նրանք արդէն գիտակցաբար կը վերաբերուին գործին՝ իմանալով, թէ ինչ է պահանջում մեր մարմինը և ինչ միջոցով կարելի է առաւել յարմարաւոր կերպով այդ պահանջներին գոհացում տալ։

Պէտք է նկատել, որ հասարակ ժողովրդին դէպի Հար-անգլիական խոհանոցը գրաւողն առաւելապէս եղաւ այն հանգամանքը, որ այդ խոհանոցում գտնում էր իւր սիրած կերակուրները և այն էլ այնպիսի նիւթերից, որոնք սովորական ձևով պատրաստելիս բոլորովին համ չեն ունենում, մինչդեռ հենց այդ նիւթերը վերին աստիճանի համեղ և սննդարար են դառնում այդ խոհանոցում։ Այսպէս օրինակ, ինչի նման է մեր սովորական եղանակով պատրաստած տաւարի մսի չորփնքը —որ մի կոշտ, պինդ, անհամ ուտելիք է, մինչդեռ դա նոյնքան համեղ պատառ է դառնում հարկաւոր ձևով պատրաստելիս, ինչպէս և մսի ամենալաւ կտորը։

Այդ խոհանոցում աւաւել սննդարար հաց լինելու փորձեր էլ են անում. այժմ այնտեղ հացը պատրաստում են գարնանացան ցորենի և ձաւարի (ովսիանայա կրուպա) խառնուրդից։ Փնտրիենից երևում է, որ այդպիսի հացի մէջ աւելի շատ են պահպանուում ազերն ու ճարպային նիւթերը, քան սովորական հացերի մէջ։

Մրևնոյն կերպով փորձեր են անում զանազան տեսակ նոր ձևի վառարանների (օջախ) օգտակարուրխեան վերաբերմամբ, և այժմ խոհանոցում կերակուրները մէմիայն նաւթով, գոլորշու միջոցով տարբացող վառարաններով են եփուում։

Իսկապէս ասած այս խոհանոցի նպատակը ոչ թէ իսկապէս ժողովրդին լաւ ձաշ պատրաստել սովորեցնելն է, այլ լաւ ձաշի ընտելացնելը. խոհանոցի ծառայողները յաճախողներին ամեն կերպ բացատրուրխիւնները տալիս են դիէտի առողջապահուրխեան և մանաւանդ մարքրասիրուրխեան մասին, միևնոյն կերպով հրապարակով, բոլորի առաջ են պատրաստում կերակուրները, բայց սովորել ցանկացողներն առաջնորդում են յատուկ խոհարարական գպրոցները։

Ամենայն օր ազատ է առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան 7-ը մտնելու խոհանոց, որի պատերը զարդարուած են քարթէզներով՝ վրան զանազան գոյնի գծեր քաշած, իսկ սեղանների վրայ գարսուած են նոյնպէս զանազան գոյնի խորանարդներ. այդ գունաւոր խորանարդները ցոյց են տալիս մարդկս մարմնի կազմուածքի բազադրիչ մասերի չարաբերուրխիւնը՝ մեծ, կապոյտ խորանարդները ջրի քանակուրխիւն են ցոյց տալիս. մոխրագոյնները —հանքային մասերը և այլն։ Իսկ պատերին կպցրած քարթէզների վրայի գրուրխիւնները գունաւոր չերտերի օգնուրխեամբ պարզ ցոյց են տալիս, թէ ինչ համեմատական չափով են զանազան բազադրիչ մասեր պարունակուում կերակուրեղէնների մէջ, ինչպէս օրինակ մսի, կաթի, գետնախնձորի, խնձորի, իւղի և այլ նիւթերի մէջ։ Իսկ նրանց կողքին կախ արած նոյնպիսի քարթէզների վրայ էլ զանազան համապատասխան նշաններով ցոյց են տրուած, թէ օրական սրքան պէտք է այդ նիւթերից գործածել՝ մարմնակազմն առողջ պահելու համար։

Ի վերջոյ պէտք է նկատենք, որ ինչպէս այս, նոյնպէս և համանման ձաշարանները նիւթական օգուտի տեսակէտից չեն բացուում։ New England Kitche-ն ինչպէս նկատեցինք, բացուել է բացառապէս գիտնական և հասարական չահերին նուիրուած կանոնաւ ձեռքով՝ մանաւանդ մարդկանց օժանդակուրխեամբ։ Խոհանոցն իւր ընթացիկ ծախսերը ծածկելուց յետոյ, առանց ո և է նիւթական օգուտ ստանալու, պատրաստած ձաշը վաճառում է այն գնով, ինչ որ նստել է։ Բնականաբար՝ քանի նրա յաճախորդները թիւն աւելանում է, այնքան էլ պակասում է և ծախսերի համեմատական չափը, այնքան էլ ձաշն է էժան նստում։

Վերջացնելով մեր յօդուածը, ցանկանանք, որ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերուրխեան բաց արած խոհարարական ուսումնարանը չհանդիպի ժողովրդի ընդիմադրուրխեան, Հայն էլ վաղուց յայտնի է իւր գործնական խելքով և իւր կեանքի հանգամանքները բարեփոխելու ընդունակուրխեամբ, ուստի պէտք է յուսալ, որ այդ «խոհարարական բաժնի» օգտակարուրխիւնը չուտով ըմբռնելով, օգնուրխեան կը հասնի նրան ոչ միայն հարկաւոր քանակուրխեամբ աշակերտուհիներ տալով, այլ և նիւթական օգնուրխեան հասնելով։

Այդ յուսով կարելի է ցանկանալ, որ Հ. Բ. Ընկերուրխիւնն աջողուրխիւն ստանալուց յետոյ ձեռնարկէը նաև էժան ձաշարան բաց անելու, ուր իւր «խոհարարական բաժնի» սաները գործնականապէս խոհարարուրխեան աշխատին վարժուելով, միջոց կըստանին նաև էժանագին ձաշարանի գոյուրխեան հարատևուրխեան՝ նրանց ձաշ պատրաստելով։

Անկասկած գործի նորուրխիւնը կարող է փոքր ինչ մտածել տալ նրանց, բայց բուսական է մի անգամ գործի ձեռք գարնել և գժուարուրխիւններն իրենք իրենց կվերանան, մանաւանդ որ ժողովուրդն էլ կամաց-կամաց ընտելանալով համեղ, առողջ և էժան ձաշի թէ յաճախորդներ կըտայ և թէ հնար կ'ունենայ իւր ապրուստի միջոցը հարստացնելու։

Մ[illegible]ան

ՄԻ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՍՊԱՑԻ ԿԱՐԾԻՔԸ Է. ԶՈԼԱՑԻ «LA DEBACLE» ՎԷՊԻ ՄԱՍԻՆ.

—

Էմիլ Զոլայի վերջին գրուածքը—«La Débacle» վէպը, որի նիւթն, ինչպէս յայտնի է, վերաբերում է Ֆրանս-պրուսական պատերազմին, ընթերցողների և քննադատների շրջաններում նոյն ազմուկը հանեց, ինչպէս և նրա լոյս ընծայած գրուածքներից իւրաքանչիւրն իւր ժամանակին։ Ինչքան որ գերականական իրապաշտական գպրոցի սահեցողի և պարագլխի չհեղեալ վէպը դուռ վիպական տեսակէտից՝ կրում է իւր արժանաւոր հեղինակի բոլոր հմայեցուցիչ յատկութիւնները—հեանալի ոճը, կենդանութիւնն և այլն,—նոյնքան, եթէ կարելի է այսպէս ասել՝ պատերազմական տեսակէտից «La Débacle» վէպը, ուր

ըելի ուրանալ նրա, մինչև բանակի պատուելիքնը, գործ դրած աշխոյժ անվեհերութիւնը. Զոլան այդ բոլորը չի ուզում ճանաչել։ Անշուշտ ընդհանուր առմամբ, ֆրանսիական բանակի պատերազմական սիստեմն և կազմակերպվելիքնը վատ էին. բայց սխալները գործողը բանակը չէր. սկսած զօրապետներից մինչև հասարակ զինուորը, բոլորը քաջութիւն ցոյց տուեցին։

«Զոլան այնքան է չեշտում ֆրանսիացոց «պատրաստ ճանապարհութեան զգացումների բացակայութիւնը», որ մարդ հեշտ և սկսում այն եզրակացութեան է գալիս, թէ այդ տեսակ մարմիններից բաղկացած մի բանակ անկասկած, առանց իսկ մի սկզբնական յարձակում կարողանալ գործելու, կը քայքայուէր։

«Օրինակ, անկարելի է, որ դեռ պատերազմի սկզբում յուսահատ զինուորները վայր ձգէին իրենց հրացանները։ Թուք կարող էք կարդալ իմ «Պատմութիւն պատերազմների» հեղինակութիւնս և տեսնել թէ ինչ էր ֆրանսիական բանակը օգոստոս ամսի սկզբում, բոլորովին անհիմն է թէ մի գեներալ կամ հագուրապետ իւր հրամանատարութիւնը ձգած, ոսկորները հանգստացնելու համար վարուկ անկողին փնտռէ. սխալ է նմանապէս, որ մի զօրապետ, իւր բանակի գործելու միջոցին, Թաղնէ և հեռանայ։ Պ. Զոլային նման հաճէլի է, Թող չարունակէ այդ տեսակ բաներ պատմել, բայց մենք գերմանացիքս, որ Սեդանում պատերազմ մղեցինք, քաջ գիտենք, որ սուտ է նրա պատմածները։

«Կարող էի դեռ ուրիշ շատ անճշտութիւններ առաջ բերել նրա գրուածքներից,—շարունակում Թանկրանը.—պ. Զոլան այնպիսի դրութիւններ է նկարագրում, որոնց մենք միայն առելի ուշ Լուսաւ մօտ տեսանք։ Այնտեղ անկարգապահութիւնը մեզ զարմանալի չէր. ինչպէս կարելի է զինուորական վարժութիւն և կազմակերպութիւն պահանջել հասարակ գիւղացուց, որին հազիւ մէկ-երկու շաբաթ վայրի վերոյ վարժեցնելուց յետոյ, դէպի կռիւ էին մղում, և այն էլ յաղթանակող բանակի դէմ։ Իրօք որ ես այնտեղ օգոստոս ամսում, այսինքն Արդէնայի և Օլիէնի ճակատամարտներից յետոյ, a la Զոլա տեսարանները գիտեցի. բայց Վէօրթի, Մլլիի, Բոմոնի և Սեդանի ընդհարումներից առաջ այդ օրինակ տեսարանները չեն եղել և կամ գոնէ հազուագիւտ։ Մենք մեզի ամենայն յարգանքով էինք վերաբերւում դէպի մեր հակառակորդները, ևս առաւել դէպի Մեցի և Սեդանի քաջագունդ զինուորները. նրանք մեր աչքում միշտ իրրև արժանաւոր հակառակորդներ հանդիսացան։ Այս ասելով ես նպատակ չունիմ Զոլային զինուորականների վարմունքը քննադատելու. նրանք անշուշտ անկարող էին կայսերական բանակի հետ մրցել, որովհետև քիչ էին սովորել և պատրաստուել, քան կայսերական բանակը։

«Որքան խորշելի և գայթացուցիչ է տեսնել զօրապետների տգիտութեան վերաբերմամբ Զոլայի նկարագրութիւնը. Նա այդ նկարագրութեամբ մինչև անգամ մի պատրաստական զէրանոցի տորին կարգի աշակերտի իրաւունք է տալիս ծաղրի և ծիծաղի առարկայ չինելու զօրապետներին։

«Անցնենք այդ հեղինակութեան պատերազմական նկարագրութեան և արուեստաբանական մասին։

«Ամենից առաջ վերցնենք Բոմոնի պատերազմը։ Զոլան բոլորովին սխալ է նկարագրում 7-րդ զօրաբաժնի չարժումը օգոստ. 30-ին. այդ օրն այդ զօրաբաժինը չանդուգն չարձակումով մեր ձախակողմեան զէրքը չետ մղեց և մեծ չուգում պատճառեց օգնութեան հասնելով 5-րդ զնդի տագնապալի դրութեանը։

«Դեռ լաւ յիշում եմ, թէ ինչպէս կէսօրից քիչ անց մի խումբ ձիաւոր հրամանատար գինուորականները գալիս էին մեզ բերելով հիմնական չարձակում գործելու հրամանը, որպէս զի մեր 10-րդ հետևակ զօրքն ազատէնք ճգնաժամից։ Մեր հասած մի ջոկողին 10-րդն արդէն սկսել էր Թշնամու զօրութեան առաջև ընկճուած՝ նահանջել. իսկ մենք—ես 1-ին բանակի գլխին լինելու բաղդատութիւնն ունէի—առաջանում էինք Ֆրանսիական մի օրինակելի զօրաբաժնի գէմ և չետ էինք մղում 1-ին հետևակների խումբը. բայց այդ չարձակման գիմագրելու մեզ օգնեց մի ամբողջ բանտրական զօրագունդ։ Այն ինչ այդ ժամանակ Ֆրանսիայից 7-րդ Թնդանօթաձիգ գունդը հնանալի կերպով ամրացված էր Varmfonds-ը, և երկար ատնորոշ դրութեան մէջ մնալուց յետոյ, հազիւ կարողացանք յաղթանակ տանել։ Ցիրաւի, աններելի է Ֆրանսիացոց Բոմոնը Թողնել-հեռանալը, բայց և այնպէս չի կարելի չգնահատել նրա ցոյց տուած՝ արիութիւնը, նամանաւանդ 7-րդ Թնդանօթաձիգ գնդինը։

«Ինչպէս մի զօրապետ կարող է չգնահատել Մազոն և Սաենայի նման յայտնի քաղաքները։ Եթէ քարտէզ չեն ունեցել, կարելի է ներել նրանց որ և է մի վոքր բլրի կամ անտառի որ կողմ և ինչ գիրք ունենալ չիմանալը, բայց,—քաղաքներ... օրինակ՝ մի զօրապետ Բոմոնից լոկ 10 մղոն տարածութեամբ հեռու լինելով, չգիտէ նրա գոյութիւնը։ Մի ուրիշը Carignan-ի մօտ չէ իմանում Բելգիական սահմանի մօտ լինելը։ Մի երրորդը Սեդանում, իւր այջի առջև հոսող գետ Meuse կամ Moselle լինելը չգիտէ։ Բաւական է. այդքանն արդէն չարվարանց ծայրահեղութիւն է։ Ինչ կըլինէը արդեօք Ֆրանսիայի գրութիւնը, եթէ նա իրօք իւր բանակի հրամանատարութիւնը 1870-ին այդ օրինակ զօրապետների յանձնած լինէր։ Իսկ գինուորականների անարգական զգացումը դէպի Նապոլէոնը անբնդունելի է. երբէք փրանսիական բանակը չէր յանդգնիլ այդպէս խօսել նրա մասին. բացի այդ, Զոլայի հանգիսացրած տիպերը զուրկ են բոլորովին, ինչպէս արդէն ասացինք, հաւատարմութեան, գիտութեան, հայրենասիրութեան, պարտաճանաչութեան զգացումից. մինչև իսկ պատերազմի ամենաճոռը բոպէներին նրանք կարծես լոկ ուտելու և խմելու մասին են մտածում։ Եթէ երբէք պ. Զոլան որ և իցէ պատերազմում եղած լինէր, կիմանար անշուշտ թէ ինչ է զբաղեցնում խեղճ գինուորին վտանգաւոր րոպէներում և ինչը նա մոռացութեան է տալիս։

«Սեպտեմբերի 3-ի և 4-ի ճակատամարտներին իմ զօրաբաժինը մեծ չէր ստացել. ևս այդ օրը չոկոլադի փոքր կտորներով գոհացայ, բայց մենք այդ օրերը պատերազմեցինք։ Ոչ ոք մեր գինուորներից փախուստ չտուեց։ Ֆրանսիացիք մեզանից աւելի բազդաւոր չլինելով, կռւում էին նոյնպէս մեզ դէմ անձնման քաջութեամբ։ Այս բոլորը իմանալու համար հարկաւոր էր անձամբ ներկայ լինել»։

Թանկրան Զոլայի «La débacle» վէպը խիստ վնասակար է համարում. այդ վէպն «այնպիսի մի զմայլելի ոճ և չարադրութիւն ունի,—ասում է նա,—որ, գինուորական ղեկս, նրան կարդացողները անպայման կըհաւատան, մինչդեռ Զոլան անարդում է խեղճ զօրապետ Մակ-Մահոնին, նկարագրում է տեսարանները, որոնք երբէք տեղի չեն ունեցել, չօրինում է անբնական իրեր և, վերջապէս, ապականում է մի ամբողջ բանակ, որի յանցանքն է եղել ձախողութիւնը, եթէ միայն դա յանցանք է, սակայն արիութեամբ գիմագրել է մինչև վերջին շունչը»։

Վերջացնելով իւր գրութիւնը, չեմ ուզում,—ասում է գերմանացի գինուորականը,—ներկայ գրութեամբս և քննել՝ արդեօք Զոլան այդ հրատարակութեամբ օգուտ թէ վնաս տուաւ Ֆրանսիային. Յամենայն դէպս, նրան պակասում է մի գլխաւոր յատկութիւն.—յարգանք դէպի անբախտութիւնը—le respect du malheur.

Amicus.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓԱՂԱՓԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական մինիստրական ժողովը «Mem. Dipl.» Թերթի ասելով, պատրաստականութիւն է յայտնել հնդկաց կառավարութեան համաձայնութեամբ մի տեխնիքական յանձնաժողով նշանակելու Պամիրի խնդիրը վճռելու համար։ Եթէ Ռուսիան չհրաժարուի միանալ այդ ձեռնարկութեանը, այն ժամանակ հաւանական է, որ գործը կըկանոնաւորուի։

—Կրեակ կղզուց Ամէնքում տեղեկութիւնները են ստացուած, Թէ այնտեղ իրերի դրութիւնն այնքան էլ խաղաղ չէ։ Ագդեցիկ կրեակացիները ժողովրդական ժողովները են կազմում և պատրաստւում են ըստւելթանին մի զեկուցում տալ նահանգապետի ձգնաժամների դէմ։ Այդպիսի ժողովներից մէկն այս օրերս չրջապատուած էր Թուրք զօրքերով, որի ժամանակ երեք կրեակացիները ծանր վիրաւորուած էին։ Այդ հանգամանքը խիստ յուզում է աւանդացրել։

—Հետագիրը մեզ հաղորդեց, որ այս օրերս սերբական արմատական կուսակցութեան պարագլուխ Պաշիչի վերայ, վերջինս ասելով, մի ինչ-որ անյայտ չարագործ ատրճանակ էր արձակել։ Ներկայումս այդ դէպքը կասկածելի է համարւում։ Ինչպէս լսում է, ներքին գործերի մինիստրը խիստ քննութիւն է նշանակել այդ գործի մասին, որի մէջ ազատամիտներն իբրեն դէմ ատրճած խարդաւանք են տեսնում։

—Հոկտեմբերի 6-ին (Ն. ս.), Պարեզի մահուան տարելիցի օրը, իրլանդական կուսակցութեան պարագլխի յիշատակին Թուրլինում մեծ հանդէս կատարուեց։

—Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների հասարակապետութեան նոխազահի պաշտօնի համար, ինչպէս ցոյց են տալիս ընտրութիւնները, ապագահութիւնը Թեքւում է ռամկավարական կուսակցութեան Թեկնածուի—Կլիվլենդի կողմը։

ՖՐԱՆՍԻԱՆ 100 ՏԱՐՈՒԱՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ.

Ֆրանսիան 1889 Թուին կատարեց իւր առաջին յեղափոխութեան (1789 Թուի) հարիւրամեակը, իսկ այս տարի էլ ուզեց առաջին անգամ Ֆրանսիայում (1792 Թուին) հասարակապետութիւն հաստատելու հարիւրամեակը։

Անկասկած սա շատ մեծ նշանակութիւն ունեցող երևոյթ է Ֆրանսիացիների կեանքում և այդ էլ պատճառը, որ 1889 Թիւը Ֆրանսիական պատմութեան մէջ յատկապես Գարիզի համաշխարհային ցուցահանդէսով, իսկ 1892 Թուականը մի շարք չքեղ և ամենայն տեղ կատարուած հանդէսներով, որոնց նիարագիրը կարդում ենք պարբերական Թերթերում։

Անկասկած՝ Ֆրանսիան մեծ առաջադիմութիւն գործեց իւր կեանքի նոր շրջանում՝ վերջին հարիւր տարուայ ընթացքում, անկասկած՝ Ֆրանսիան մեծ յեղափոխութիւնից յետոյ ամենայն կողմից ահագին քայլեր է արել դէպի առաջ։

Ուստի հետաքրքիր չի լիմանալ, Թէ ինչումն է կայանում այդ առաջադիմութիւնը, ոքան մեծ է դա չափը։

Ահա այդ հետաքրքիր հարցերին պատասխան տալու նպատակով շատ համառօտ կերպով առաջ կըբերենք մի քանի Թուեր, որոնք Թէև ինքն ըստ ինքեան շատ չոր, բայց և չափազանց հետաքրքիր, չափազանց պերճախօս վիճակներ են այդ հարցի տարբեր ընթացքում Ֆրանսիայի գործած առաջադիմութեան։ Ոչինչ այնքան համոզիչ չէ, ինչպէս Թիւը, որ ամենապարզ կերպով ներկայացնում է ամենայն ինչ։

—

1889 Թուին «Journal de la société de statistique de Paris»-ի համարներից մէկում վիճակագիրը Նէյմարկը մի յօդուած էր հրատարակել ցոյց տալու համար, Թէ ինչ տնտեսական, առևտրական, արդիւնագործական և ֆինանսական առաջադիմութիւն է գործել Ֆրանսիան վերջին հարիւր տարուայ ընթացքում։ Տեսնենք այդ Թուերը։

Հարիւր տարի առաջ Ֆրանսիայում համարւում էր 27½ միլիոն ժողովուրդ, իսկ այժմ մօտ տասը միլիոն աւելի է, այսինքն 38 միլիոն, որ ասել է երկրի աճելութիւնը հաւասար է 45%-ի։ Ինքը ըստ ինքեան հասկանալի է, որ դա ընդունելով միջին Թիւ, կարելի է համարձակ եզրակացնել, որ Ֆրանսիայում քաղաքները հինգ անգամ աւելի են աճել ընդհանուր երկրի աճելութիւնից։

Եւ որովհետև երկրի պրոֆեսիոնալ կեդրոնը քաղաքներն են կազմում, ուստի և քաղաքների աճելութիւնն ապացոյց է երկրի արդիւնագործութեան ու առևտրի ծաղկման։

Հինգ Թուերն էլ ցոյց կըտան այդ։ Հարիւր տարի առաջ Ֆրանսիայում հանում էին ընդամենը 240,000 տոննա, իսկ այժմ՝ 19.909,000 տոննա, որ ասել է՝ 83 անգամ աւելի, իսկ երկրում գործ է ածւում 29.629,000 տոննա, մինչդեռ 100 տ. առաջ՝ 450,000 տոննա, ասել է 65 անգամ պակաս։

Նիւթի արդիւնագործութիւնը չատացել է 50,000 տոննից 767,000-ի, ասել է 15 անգամ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ արդիւնագործութեան առարկաները էլ աւելի բազմատեսակ են դարձել և աւելի կատարելագործուել։

Ֆրանսիայի արտաքին առևտուրը նոյնպէս ընդարձակուել է։ 1789 Թ. ներմուծուում էր 576.584,000 ֆրանկի և արտահանուում էր 440.000,000 ֆրանկի ապրանք. ընդհանուր շրջադարձ գումարը 1.070,000,000 էր. իսկ 1886 Թուին ներմուծուել է 5.116,000,000 ֆրանկի, իսկ արտահանուել է 4.235,000,000 ֆրանկի ապրանք, ընդհանուր շրջադարձ գումարն է 9.361,000,000 ֆր., այսինքն ինն անգամ աւելի։ Առևտրական գործ տեսնուած է 100 տ. առաջ 503 միլիոնի, իսկ այժմ 8.685 միլիոնի, այսինքն 17 անգամ աւելի։ Շարժական կայքի գումարն էր 200—300 միլ., այժմ հասնում է 70—80 միլիարդի, այսինքն 300 անգամ աւելի։

Կառավարութիւնը տուրք հաւաքում էր 1789 Թուին ընդամենը 691.363,282 ֆր. իսկ 1886 Թ. 3.011.992,000 ֆր. տուրք հաւաքելու համար ծախսում էր 100 տ. առաջ 113.798,288 ֆր., այսինքն 17%, իսկ այժմ միայն 6%, այդ տուրքից առաջ 52%-ը, այսինքն մօտ 363½ միլիոնն անմիջական հարկից էր գոյանում, իսկ մօտ 53 միլիոնը՝ մաքսատներից, մօտ 17½ միլիոն՝ պոստից. իսկ այժմ անմիջական տուրքը կազմում է ընդհանուր գումարի հազիւ ¼ մասը, իսկ մաքսային եկամուտը հասել է մօտ 353½ միլիոնի, ուրեմն 8 անգամ աւելի, պոստինը՝ 172 միլիոնի՝ ուրեմն 10 անգամ աւելի։ Իսկ կողմնակի տուրքերից այժմ կառավարութիւնն անհամեմատ աւելի եկամուտ է ստանում, քան Թէ առաջ։ Մինչ առաջ այդ եկամուտը հաւասարեա գոյութիւն չունէր, այժմ միմիայն ոգելից ըմպելիքներից, ծխախոտից ու շաքարից մի միլիարդից աւելի է ստացուում։

Մ. Մ.

(Վերջը միւս անգամ)։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մօտերքս Ֆրանսիայի մի քաղաքի դատարանում կարգացուեց հինգ տարի բանտարկութեան ենթարկուած քսմիկոս Տիբսլենի իւր բարեկամին գրած նամակը։ Թէ ինչպէս բանտարկեալները կարող են խորհրդաւոր հաղորդակցութիւն ունենալ իրար հետ՝ նամակից իմացուեցաւ, որ դրա միջոցները շատ են. ամենասովորականը պատշաճաւոր նամակն է, որ բանտապետը նախ կարդալով՝ հասցնում է ըստ պատկանելոյն, առանց կասկածի. բայց ստացողն իմանում է, Թէ բանն ինչումն է. նա կեղտոտ ձեռքը քսում է նամակի երեսին, որտեղ Թանաքով տողերի մէջ երևան են գալիս նոր տողեր, որ գրուած են լինում կամենալ անհնարելի կերպով. երկրորդ միջոցն է՝ նամակում անգրագէտ ձևանալը, բառերը կիսատ գրելով. նամակն ըստացողը կըկարդայ ոչ Թէ գրածը, այլ բառերի պակասորդը։

—

Նորվեգիայի հնչակեալը երկրաբոյզ Նանգէնն մի փորձնական ուղևորութիւն է կատարելու դէպի Հիւսիսային բևեռը։ Կոպենհագենում նա կարգացել է իւր մի ճառը, որով յայտնում էր, Թէ մտադիր էր գնալ յիշեալ բևեռը Բերինգեան ծովից, բայց այժմ իւր ծրագիրը փոխած է և, պիտի ճանապարհուի Կարայեան ծովից։ Պ. Նանգէն կարծում է, որ ճանապարհորդութիւնը երկու տարի կըտեւի. շոգենաւը, որով պիտի ուղևորուի Նանգէն, պիտի նման լինի կոկոսեան կէս ընկոյզի և իւր մէջ հինգ տարուայ պաշար պիտի պարունակէ։

—

Հնդկաստանում մի ընկերութիւն է կազմուելու, որ պիտի բարձրանայ Հիմալայեան լեռները գագաթը. արդէն մի չանդուգն ալբանացի իւր առաջնորդներով բարձրացել է լեռների գագաթներից մինը, որ 20 հազար ոտնաչափ բարձրութիւն ունի. Ճանապարհին ալբանացին ոչ մի խոչընդոտի չէ հանդիպել, բայց Թէ բնականաբար նրա չընչաւորութիւնը դժուարանում էր և սըրան բարեխօսը Թուրանում. նոյն անձը չարունակել է իւր ճանապարհը աւելի բարձր, բայց արիգակի ճառագայթները քիկուելով ձեան մակերևոյթից սպիտել են նրան իջնել։

ՀԵԹԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Վիեննա 7 հոկտեմբերի.—Աւստրիական պատգամաւորները ժողովում գրաֆ Կալնոկին պատասխանել է պատգամաւորներին և յայտնել է, որ ինքը

ջերմ սրտով կամենում է Ռուսիայի հետ ամենալաւ յարաբերութիւններ և առևտրական գաշնագիր ունենալ. բայց այժմ պէտք է ասասել, թէ Ռուսիան ինչ կրպատասխանի. Գերմանիայի հետ ունեցած գաշնակցութեան վերաբերութեամբ միևնոյնն ասաց. «Քանի որ մենք չենք ենթարկուել յարձակման, գաշնագրի պարտաւորութիւնները ոչ մի ոյժ չունին, իսկ Ռուսիայի վրայ մենք յարձակում չենք գործիլ»

ԲԵՐԼԻՆ.—Ձինուորական օրէնքը, որով ծառայութիւնը կրճատուում է մինչև երկու տարի, գեռ անցորդ է մնացած. ասում են, պահանջները քչացրած են, բայց միանգամից հրաժարուել օրինագծից կառավարութիւնը երբէք պատրաստը չէ։

Բաւարիայում, Վեստֆալիայում Պրուսիայում ձախակողմեան տուրքն ուժեղացնելու պատճառով եղած բողոքը ատատկանում է և ձախակողմեան պատրաստողները պատգամաւորութիւն են ուղարկում Բերլին։

Խնդիրը է յարուցուում 1895 թուին գերմանական արդիւնաբերական հրապարակական մեծութեամբ ցուցահանդէս բանալ համաշխարհային ցուցահանդէսի փոխարէն։

ՄՈՍԿՈՒԱ, 8 հոկտեմբերի.—Այսօր Բրեստի երկաթուղով արտասահմանի ուղևորուեցին Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչն և Մեծ Իշխանուհի Ելիզաւետա Ֆէօդորովնան։

ՏԱՇԿԷՆԴ.—Խոլերան Թուրքաստանում գադարել է. Անդրկասպեան երկրում Պարսկաստանի և Աֆղանիստանի սահմանից վերցրած է կարանտինը և մոլի՞ է արուած ապրանքների ներմուծումը, բացի կեղտաշորերից և հին հագուստեղէնից։

ԿԻԵՒ.—Շաքարագործարանների ներկայացուցիչները հոկտեմբերի 7-ի նիստում որոշել են բոլոր աւելորդ չաքարը ուղարկել Ռուսիայի վաճառանոցները, չաքարագործարանատէրերին ազատ կացութեան մէջ չաքարը պատրաստելիս կերպով արտասահման արտահանելուց և այն դէպքում, եթէ չաքարի գները շահագործողների շրջանում որոշեալ քանակից բարձրանան, խնդրամասոյց լինել, որ Թոյլ արուի չաքարն արտասահմանից ներմուծել պակասեցած սակագներով։

ԿՈՐՈՒԲԻՐԳ.—Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչն Ամուռնու հետ Պարիզ ուղևորուեց։

ՎԻԵՆՆԱ.—Էրցհերցոգ Կարլ Լուդվիգն և նրա ամուսին Էրցհերցոգուհի Մարիա Թերեզային երէկ երեկոյեան Վիեներ-Ջէյշտատի մօտ գժբազդութիւն պատահեց. Ձիերը, մի ինչ-որ բանից վախեցուով, պատահական կառքը շուռ տուին գէպի ջրանցքն, ուր և նետուեց Էրցհերցոգը. Նա մի քանի ժամանակ ուշաթափ ընկած էր ջրանցքի մէջ։ Էրցհերցոգուհին ընկաւ կառքի տակը, որի ձեռին անիւներից մէկին անցաւ նրա ոտների վրայով, բաւական վնաս պատճառելով։ Պատահական կառապանը գլխի վրայ ծանր վէրք ստացաւ։ Էրցհերցոգուհին սափրուած է այժմ անկողնում մնալ. Էրցհերցոգն այսօր գեռ գանգատւում է, որ գլուխը ցաւում է։

Այսօր բարձուած է Ռուսիայից ձիերի արտահանման արգելումը, որ հրատարակուած էր Վոլոչիսկում ձիերի մէջ եղած համաճարակ հիւանդութեան առթիւ։

ՊԱՐԻԶ.—Հասարակապետութեան նախագահ Կարնոն այսօր Նիսեան պալատում ընդունել է Էչխաուենբուրգի հերցոգին. Նրանց խօսակցութիւնը, որ ½ ժամ տեւեց, առանձին մաերմական բնաւորութիւն չէր։ Հերցոգի Նիսեան պալատ գնալիս և այնտեղից հեռանալիս, Նորին Բարձրութեանը դիմաւորած կան պատիւները էին արուած. այնուհետև Կարնոն այցելութեան գնաց հերցոգին.

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԻԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Վ ր է պ ա ն։ — «Նոր-Դար»-ի 153 համարի տեղեկատուի բաժնում ասուած. Աբսէն քահ. Բագրատունու տուած հաշուի վերջում հեռւեալ սխալն է սպրտել.

«1. Նուիրատուներ հանգուցեալ Պետրոս Նանչեանի համար ժողովարարութիւն անելու 200 օրինակ—5ր. 50 կ. պիտի լինի—3 ր. 50 կ.»

Դանձակում մոգայի պէս մի սովորութիւն է գարձել, որ մարդիկ իրենց ննջեցեալների թաղման ժամանակ քահանայի կամ յաջորդի միջոցով եկեղեցու բեմից ծանուցանել են տալիս, Թէ այս ինչ և այն ինչ հասատատութեանն այսքան և այսքան գումար են նուիրում, բայց յետոյ ոչինչ չեն տալիս։ Այսպէս, օրինակ, կան մարդիկ, որոնք քաղաքիս մէմեանց ս. Լուսաւորիչ եկեղեցու երկսեռ գպրոցների համար իրենց ննջեցեալների յիշատակին վերոյիշեալ միջոցով խոստացել են նուիրել մօտ 1500 ր. գումար, բայց մինչև այժմ չեն կամենում խոստացածը տալ յիշեալ եկեղեցու երեցփոխին կամ գպրոցի հոգաբարձութեանը։ Ահա երեք տարի է, որ մենք մեզ խաբում ենք այդ գումարի ապարդիւն յուսով։ Արդ՝ սրանով հրապարակով յայտնում ենք այդ պարոններին, որ եթէ մինչև այս տարուայ վերջը չեն տալ իրենց խոստացած գումարները, նրանց ազգանունները, որոնք գրուած են հոգաբարձական մատեանում, հրապարակ կըհանուեն և միանգամայն կըննջուեն մատեանից։ Գոնէ այդ խրատ կըլինի նրանց, որոնք ուզում են նիսիա «բարերարն» անուն վաստակել, որ լաւ գործ չէ։

Սիմէոն քահ. Տէր-Խաչատրեանց.
Դանձակ, 28 սեպ.։

Պետական կառքերի երթևեկութիւնը ռազմա-վիրական տրակտի վրայ։

—

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին, գիշերում Մլեթի կայարանում, վերադառնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Եօթ հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Վաղերաժից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8 ին, գիշերում է Մլեթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Փոստային կառքերի երթևեկութիւնը Երեվանի Բաժումի, Օլխասայի եւ Կ. Պոլսի միջեւ։

Բաղուից երեքշաբթի, հինգշաբթի եւ կիրակի օրերը, առաւօտեան, կ. Գորչից։

Փոստային եւ ապրանքակիր-մարդատար շոգենաւերի երեւակութիւն Փոթիի, Բաթումի եւ Օլխասայի միջեւ։

Փոթի հասնում է.

Փոստային մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օլխասայից կիրակի օրերը երեկոյեան։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին

Փոթիից դուրս է գնում.

Փոստային-մարդատար շոգենաւը Օլխասա և Հանդասարձին գտնուած նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին։

Փոստային-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթում երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օլխասա և Հանդասարձին գտնուած նաւահանգիստները։

—

Ալրանէքսիէր մարդատար գիծ.

Բաթումից դուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 1-ին։

Բաթում հասնում է երեքշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 2-ին։

Ապրանքակիր մարդատար շոգենաւերի վրայ ընդունում են II և III կարգի ուղևորներ և առանց ուսերի պարագրերէնի։

Գործակալութիւնը գտնւում է Թիֆլիսի ազ. բակի շինութեան մէջ № 117 և 118։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

կիրակի հոկտեմբերի 11-ին Հայ դերասանական խումբը կընկերակացնէ առաջին անգամ

I.

ՍՄԲԱՏ Ա.

պատմական տղերգութիւն 3 արարուածով Հեղ. Ս Հէքիմեանի։

II

ԱՅԻ ՔԵԶ ՕՁԻՆ

Փարս 1 արարուածով, Հեղ, Գ. Երէցփոխեանի։

Կըմասնակցեն՝ տ. տ. Մէլիքեան, Ներմակեան. պ. պ. Պետրոսեան, Աբրահամեան, Տէր-Դաւթեան, Աղայեան, Արաքսեան և ուրիշները։

Տեղերի գինը սովորականն է։

Սկիզբն է 7½ ժամին։

(357) 2—1.

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ «ԳԻՒՂԱԿԱՆ-ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ» աշխատութեանս համար յօդուածներ ուղարկողներից այսուհետև ինձ գիմելիս ուղարկեն իրենց գրութիւնները Հետևեալ հասցէով Тифлисъ. Редакція «Норъ-Дары։

Յովհաննէս Մալխասեանց

(0-0-0) 5—5.

ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑ

ընդունելութիւնը ցերեկուայ ժամը 8-ից մինչև 12-ը և երեկոյեան ժամը 6-ից մինչև 8-ը, վէներական, կաշուի և ականջի հիւանդութիւնների համար։

Սոլոլաի, Սափռալայա փ., սէփ. տուն։

ՆՈՅՆ ՏԵՂՈՒՄ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՎԱՆՆԱՆԵՐ

(Բաղանիս) շքեղ և առողջապահօրէն կահաւորուած։

50—5

Թիֆլիսի գրավաճառանոցներում վաճառւում են

ԵՐԳԻՉ ՋԱՄԱԼՈՒ

ՔՆԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ

Գինը 20 կոպէկ։

(347) 5—5.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵՏՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ վարչութիւնը սրանով յայտնում է, որ նա պատրաստ է օժանդակութիւն տալ այն վարժուհիներին, որոնք կրցանկան պատրաստուել մեր ծխական ուսումնարաններում ուսուցչութիւն անելու համար պահանջուող պետական սահմանեալ վկայագիրը ձեռք բերելու։ Սերգիևսկայա փողոց, թիւ 14։

(355) 2—2.

ՑԵՆՁ ձեռք բերել ցանկացող հայ ուսուցիչներին անհնարին չէր փնտրով պատրաստում է ուսուցչական ինստիտուտն աւարտած մի փորձուած ուսուցիչ։ Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրատուն։

10—4

ՆԿԱՐԻՉ ԵՆՈՎՔ ՆԱՋԱՐԵԱՆ

Կօղար ամարանոցից Թիֆլիս վերադարձած լինելով, բնակւում է Պուշկինսկայա փողոցում, ռուսաց հոգևոր սեմինարիայի և աքուերի դիմաց «Афины» հիւրանոցում № 10։

Նկարչին տեսնել ցանկացողները կարող են գտնել նրան իւր բնակարանում ամենայն օր երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։

10—4.

ՎԱՃԱՌԻՒՄ ԵՆ

«Նոր-Դար»-ի խմբագրատան մէջ հետևեալ գրքերը.

Բ֊ժ. ԱՐԱՄԵԱՆ—«Սալիանից-Էչմիածին» նկարագիր ուխտաւորութեան։ Գինը 50 կոպ.։

ԳԷՈՐԳ ՋՈՒԲԱՐ—«Վէպեր և Պատկերներ»։ Գինը 1 ր.

Կ. Կ. ՄԷԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ—«Փշրանք»։ Գինը 15 կոպ.։

Ա. ԱԳԱՊԵԱՆ—«Մուսինի գանգատը»։ Գինը 7 կոպ.։

Մ. ԱՒԵՂԵԱՆ—«Նմուշներ»։ Գինը 40 կոպ.։

ՆԱՐ-ԴՈՍ—«Անոնա Սարոյեան» էտիւդ։ Գինը 30 կոպ.։

Գ. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ.—«Անեկդոտներ»։ Գինը 50 կոպ., օտար քաղաքացիք պիտի պոստի ծախքը վճարեն։

ԵՂԲ. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆՆԵՐԸ

Պատիւ ունին ծանուցանելու պ. պ. վաճառականներին, կոմիսիոներներին և առևտրական գործակալներին, որ Ն./թ. սեպտեմբերի 1-ից ԲԱԳՈՒԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԲԱՑ ԵՆՔ ԱՐԵԼ ԿՈՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ և ամեն տեսակ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կատարելու համար ԳՐԱՍԵՆԵԱԿ։ Մասնաւորապէս կատարում ենք նաև նաւթային գործեր։

Մենք յարաբերութիւն կունենանք ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ, ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ երկրների և ՌՈՒՍԻԱՅԻ գլխաւոր քաղաքների հետ, իմիջի այլոց Աստրախանի, Նիժնի-Նովգորոդի, Մոսկուայի և Օդեսայի ու Կովկասեան բոլոր նշանաւոր քաղաքների և երկաթուղու կայարանների հետ։

Մեր կողմից ոչ մի ջանք չպիտի խնայենք, որ ապրանքների մատակարարելը, վաճառելը, ուղարկելը կատարուին բարեխղճութեամբ և չափաւորութեամբ։

ՄԵՐ ՊԱՏՄԱՆՆԵՐԸ ԿԼԻՆԻՆ ՄԱՏՋԵԼԻ և ՁԵՌՆՏՈՒ։

Եղբարք Տէր-Նիկողոսեաններ։

Մեր հասցէն Նաւթային Բաքու Братья Теръ-Никогосянцъ. Баку Терникогосянцъ.

(340) 30—6

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

ՏԱՄՈՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են *ատեստատներ*։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւնհամբիչի վրայ, 5 Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն։

Ուսումն սկսուելու է հոկտեմբերի 1-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սօլօլակում՝ Ալէքսանդր Փրիդոնովի տանը №9, Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻՍՊԷՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ. С. П. Мануэльянцу.

(319) 25—19

Дозволено цензурою. Тифлисъ 8-го Октября 1892 г. Տպարան «Կաւկազ» լրագրի Типографія, «Кавказъ» Гол. пр. домъ Читахова.